ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/2481-22 առ "04" 11 2022թ.

Ձեր №_____ առ "___" _____ 2022թ.

«ՏՆ-ԼԻԴԵՐ» ՍՊԸ-ի տնօրեն
Պրն Ս.Շանոյանին
E-mail: tnlider@mail.ru

[Ծանուցում №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-107/22-01/180 պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի՛ պարոն Շանոյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար ռելե (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով ս/թ հունիսի 22-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-107/22» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 2,6,7 և 9-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ՏՆ-ԼԻԴԵՐ» ՍՊԸ-ի միջև 2022թ. օգոստոսի 5-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-107/22-01/180 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 3186000 (երեք միլիոն հարյուր ութսունվեց հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 7-րդ չափաբաժնով սահմանված 10հատ ռելեն, որի ընդհանուր գինը կազմում է 720000 (յոթ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ «ՏՆ-ԼԻԴԵՐ» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի

- 2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի,
- 2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը:
- 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտվել էական է համարվում, եթե՝ բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի;

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ՏՆ-ԼԻԴԵՐ» ՍՊԸ-ի հետ 2022թ. օգոստոսի 5-ին կնքած թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-107/22-01/180 պայմանագիրը 7-րդ չափաբաժնի մասով:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքի մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժը և տուգանքը:

Գլխավոր տնօրենի տեղակալ-
ընդհանուր հարցերի գծով տնօրեն՝ **Ս.Մաթևոսյան**

Կազմեց՝ Վ. Մանուկյան
ԳԲ 2-րդ կարգի մասնագետ
+374 10 28 29 60